ՀՀ Լոռու մարզպետԱրամ Ղազարյանին

«Քաղաքացու Ձայնը» մեդիահարթակի լրագրող

Լուսինե Սարգսյանից

/+37496979201, lusatu75@gmail.com/

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելիպրն. Ղազարյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել հետևյալտեղեկությունները:

1.Ի՞նչ տիպի ենթակառուցվածքներ են գործում աղետի գոտում /հյուրանոցային, հյուրատնային, զբոսաշրջային, ռեստորանային, խնդրում եմ նշել թիվ/

2. Ջրհեղեղի հետևանքով քանի՞ տնտեսություն է տուժել/ վնասվել(հյուրանոցային, հյուրատնային, զբոսաշրջային, ռեստորանային),

3.Արդյո՞ք աջակցություն է ցուցաբերվել վերոնշյալ տնտեսվարողներին, եթե այո՝ ինչպիսի՞, եթե ոչ՝ ինչո՞ւ, ի՞նչ քայլեր են ձեռնարկվում մարզի ղեկավարության կողմից

4.Արդյո՞ք Լոռու մարզպետարանը տիրապետում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի մշակած զբոսաշրջային այցերի 2023-ի վիճակագրությանը, եթե այո, խնդրում եմ նշել, թե 2023-ին քանի՞ զբոսաշրջիկ է այցելել աղետի գոտու տարածաշրջան

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Վերոնշյալ հարցերի շուրջ խնդրում եմ նաև համապատասխան պաշտոնյայի հետ հարցազրույց՝ տեսանյութի համար:

Կանխավ շնորհակալ եմ՝ Լուսինե Սարգսյան

05.08.2024 թվական